

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.15-րդ և 1.6-րդ կետերի պահանջներով

Կարգադրում եմ՝

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2011թ դեկտեմբերի 6-ի 01/15/7795-11 հանձնարարականի՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ծրագրին համաձայն 2012թ հունվարի 1-ի դրությամբ մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով

Հովհաննիսյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղվարչության

պետ /հանձնաժողովի նախագահ/

Բարսեղյան Կ. – „Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդի

անվտանգության,, մարզային կենտրոնի տնօրեն

/համաձայնությամբ/

Մարզի համայնքների ղեկավարները /համաձայնությամբ/

2. Մարզի տարածաշրջաններում անասունների համատարած հաշվառման կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ներքոհիշյալ մասնագետների վրա՝

Գրիգորյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և

բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի

վարիչ, Վարդենիսի տարածաշրջան

Ղազարյան Ս. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և

բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ,

Գավառի տարածաշրջան

Խալաֆյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և

բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ,

Սևանի տարածաշրջան

Ղազարյան Ս. – մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ

վարչության գլխավոր մասնագետ ,Մարտունու տարածաշրջան

Հովհաննիսյան Ռ. – մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ

վարչության գլխավոր մասնագետ, Ճամբարակի տարածաշրջան

3. Հանձնաժողովին՝ անասունների գլխաքանակի հաշվառման աշխատանքները մարզի տարածաշրջաններում կատարել 2012 թվականի հունվարի 1-17-ը:
4. Կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Գ.Ստեփանյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ